«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՐԻ ԳԵՎՈՐԳԻ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ԵՐԵՎԱՆ 2026

МЕЖГОСУДАРСТВЕННАЯ ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ
ВЫСШЕГО ОБРАЗОБАНИЯ

«РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ»

АМБАРЦУМЯН МЕРИ ГЕВОРГОВНА

ПРОБЛЕМЫ ВНЕСУДЕБНОГО РАЗРЕШЕНИЯ АДМИНИСТРАТИВНЫХ СПОРОВ: КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по специальности 12.00.02- Публичное право
(конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ЕРЕВАН 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի եվրոպական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լյուդմիլա Ասլանի Տխաբիսիմովա**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Հրանտ Արայի Նազարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ արդարադատության ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի նոյեմբերի 30-ին՝ ժամը 16:00-ին, «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպությունում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ «Ռուս-Հայկական համալսարան» ԲԿՄՊԿԿ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հոկտեմբերի 29-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утверждена в Европейском университете Армении

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Ашот Гайкович Хачатрян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Людмила Аслановна Тхабисимова**

кандидат юридических наук **Грант Араевич Назарян**

Ведущая организация: **Академия правосудия Республики Армения**

Защита состоится 30 ноября 2026 года в 16:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Межгосударственной образовательной организации высшего образования «Российско-Армянский университет» (0051, г. Ереван, ул. О. Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в научной библиотеке МГОВО «Российско-Армянский университет».

Автореферат разослан 29 октября 2026 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук **Дж.А. Айрапетян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իրավական պետության և հանրային կառավարման զարգացման պայմաններում մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը սահմանադրական և վարչական իրավունքի առանցքային խնդիրներից է: Հանրային իշխանության իրականացումն անխուսափելիորեն կարող է հանգեցնել հանրային և մասնավոր շահերի բախման, վարչական մարմինների որոշումների, գործողությունների կամ անգործության իրավաչափության վերաբերյալ տարաձայնությունների, ինչպես նաև անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման: Այս պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում վարչական վեճերի արդյունավետ, մատչելի և ժամանակին լուծման այնպիսի կառուցակարգերի առկայությունը, որոնք մի կողմից ապահովում են անձի իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ նպաստում հանրային իշխանության գործունեության օրինականությանը:

Ժամանակակից իրավական պետությունում վարչական վեճերի լուծումը չի սահմանափակվում միայն դատական պաշտպանությամբ: Դատական վերահսկողությունը մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիք է, սակայն հանրային կառավարման ոլորտում ծագող յուրաքանչյուր տարաձայնության լուծումը դատարան տեղափոխելը չի կարող դիտվել որպես միակ արդյունավետ միջոց: Վեճերի մի մասը հնարավոր է լուծել ավելի վաղ՝ հենց վարչական համակարգի ներսում կամ այլ արտադատական կառուցակարգերի միջոցով: Հետևաբար, վարչական արդարադատության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն արդյունավետ դատական պաշտպանությամբ, այլև վարչական վեճերի արտադատական լուծման գործուն համակարգի առկայությամբ:

Արտադատական պաշտպանության նշանակությունն արտացոլված է նաև միջազգային իրավական չափորոշիչներում: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության շրջանակներում զարգացած պատշաճ վարչարարության գաղափարը կարևորում են անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը նաև վարչական հարաբերությունների շրջանակում: Այս համատեքստում վարչական բողոքարկումը, քվազիդատական կառուցակարգերը, համաձայնեցման և հաշտարարության ընթացակարգերը կարող են դիտարկվել որպես անձի իրավունքների պաշտպանության և պատշաճ վարչարարության ապահովման փոխկապակցված միջոցներ:

Հայաստանի Հանրապետությունում ևս այս խնդիրը պետք է դիտարկել իրավական պետության, պատշաճ վարչարարության և արդյունավետ իրավական պաշտպանության սահմանադրական երաշխիքների համատեքստում: Դրանց արդյունավետ իրացումը ենթադրում է ոչ միայն դատական պաշտպանության գործուն համակարգի առկայություն, այլև այնպիսի վարչական ընթացակարգերի ձևավորում, որոնք հնարավորություն կտան հնարավորության սահմաններում կանխել կամ լուծել հանրային կառավարման ոլորտում առաջացած իրավական տարաձայնությունները մինչև դրանց դատական վեճի վերածվելը:

Հարցի արդիականությունը պայմանավորված է նաև հանրային կառավարման հարաբերությունների բարդացմամբ և վարչական մարմինների գործունեության շրջանակի ընդլայնմամբ: Վարչական մարմինների կողմից լուծվող հարցերի և ընդունվող վարչական ակտերի աճը, կարգավորվող հարաբերությունների բազմազանությունը, ինչպես նաև վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը ցույց են տալիս, որ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը չի կարող հիմնվել միայն դատական պաշտպանության վրա: Անհրաժեշտ է նաև արտադատական պաշտպանության այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա վարչական մարմնի որոշման, գործողության կամ անգործության վերաբերյալ վեճը լուծել հնարավորինս արագ և արդյունավետ՝ առանց դատական պաշտպանության իրավունքը սահմանափակելու:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում վարչական վեճերի արտադատական լուծման համակարգը հիմնականում զարգացել է վարչական բողոքարկման շրջանակում: Գործող իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս ամբողջական հայեցակարգային մոտեցում չի ձևավորվել արտադատական լուծման ձևերի, դրանց հարաբերակցության, կիրառման սկզբունքների և գործառութային նշանակության վերաբերյալ: Ուստի անհրաժեշտ է վարչական վեճերի արտադատական լուծումը դիտարկել ոչ թե առանձին ընթացակարգերի, այլ միասնական համակարգի տեսանկյունից:

Հարցը բավարար չափով ամբողջական ուսումնասիրություն չի ստացել նաև հայրենական իրավաբանական գիտության մեջ: Վարչաիրավական վեճերին, վարչական բողոքարկմանը, վարչական վարույթին և վարչական արդարադատությանը վերաբերող առանձին հարցեր ուսումնասիրվել են տարբեր հեղինակների կողմից, սակայն վարչական վեճերի արտադատական լուծումը, որպես փոխկապակցված ձևեր, սկզբունքներ և կառուցակարգեր ներառող համակարգ առանձին համալիր ուսումնասիրության կարիք ունի: Հատկապես կարևոր է հստակեցնել վարչական վեճի և դրա արտադատական լուծման իրավական բնույթը, տարբերակել արտադատական լուծման առանձին ձևերը և որոշել դրանց տեղն ու նշանակությունը անձի իրավունքների պաշտպանության համակարգում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև միջազգային փորձի ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Մի շարք եվրոպական իրավակարգերում վարչական բողոքարկման հետ մեկտեղ կիրառվում են քվազիդատական, համաձայնեցման և հաշտարարական տարբեր կառուցակարգեր: Դրանց ուսումնասիրությունը կարևոր է ոչ թե արտասահմանյան մոդելները մեխանիկորեն ներպետական համակարգ տեղափոխելու, այլ այն մոտեցումները բացահայտելու համար, որոնք, հաշվի առնելով Հայաստանի իրավական համակարգի առանձնահատկությունները, կարող են նպաստել արտադատական պաշտպանության կառուցակարգերի զարգացմանը:

Այսպիսով, հետազոտության արդիականությունը պայմանավորված է վարչական վեճերի արտադատական լուծման տեսական հիմքերի հստակեցման, դրա ձևերի և սկզբունքների համակարգային ուսումնասիրության, գործող իրավակարգավորման խնդիրների բացահայտման և Հայաստանի Հանրապետությունում արտադատական

պաշտպանության կառուցակարգերի հետագա զարգացման գիտականորեն հիմնավորված ուղղությունների մշակման անհրաժեշտությամբ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Վարչական վեճերի և դրանց լուծման հիմնահարցերը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրվել են թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան իրավագետների կողմից: Մասնավորապես, գիտական այդ ուսումնասիրությունների շրջանակում անդրադարձ է կատարվել վարչական վեճի հասկացությանը և իրավական բնույթին, վարչական բողոքարկմանը, վարչական վարույթին և վարչական արդարադատությանը, ինչպես նաև վարչական վեճերի արտադատական լուծման առանձին ձևերին և դրանց կիրառման սկզբունքներին: Նշված հիմնահարցերի ուսումնասիրության համար նշանակություն ունեն Յու. Ն. Ստարիլովի, Ե. Բ. Լուպարևի, Ա. Բ. Զելենցովի, Ն. Յու. Խամանևայի, Ի. Մ. Դիվինի, Ն. Գ. Կիպերի, Ս. Պոպովիչի, Ա. Ի. Օկունևի, ինչպես նաև հայրենական հեղինակներ Գ. Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Թովմասյանի, Վ. Պողոսյանի, Գ. Մուրադյանի և այլ հեղինակների աշխատությունները:

Վարչական վեճերի և դրանց լուծման հիմնահարցերի վերաբերյալ իրավագիտության մեջ առկա են բազմաթիվ մենագրություններ, ատենախոսություններ, գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և գիտաժողովների նյութեր: Այնուամենայնիվ, այդ ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են վարչական վեճերի լուծման առանձին հարցերին կամ իրավական կառուցակարգերին, մինչդեռ վարչական վեճերի արտադատական լուծումը՝ որպես փոխկապակցված ձևեր, սկզբունքներ և կառուցակարգեր ներառող միասնական համակարգ, հայրենական իրավագիտության մեջ բավարար չափով համալիր ուսումնասիրության չի ենթարկվել:

Մասնավորապես, լրացուցիչ գիտական ուսումնասիրության կարիք ունեն վարչական վեճերի արտադատական լուծման իրավական բնույթը և դրա տեղը վարչական արդարադատության համակարգում, արտադատական լուծման ձևերի սահմանազատման և դասակարգման չափանիշները, դրանց նկատմամբ կիրառելի սկզբունքների համակարգը, վարչական և քվազիդատական բողոքարկման հարաբերակցությունը, ինչպես նաև համաձայնեցման և հաշտարարության կիրառման հնարավորություններն ու սահմանները: Կարևոր նշանակություն ունի նաև միջազգային իրավական չափորոշիչների ուսումնասիրությունը և դրանց ազդեցության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի զարգացման վրա:

Նշված հիմնախնդիրների համալիր ուսումնասիրության և դրանց լուծման հայեցակարգային մոտեցումների մշակման անհրաժեշտությամբ են պայմանավորված սույն ատենախոսության նպատակը, խնդիրներն ու հետազոտության ուղղությունը:

Հետազոտության օբյեկտ են վարչական վեճերի արտադատական կարգով լուծման գործընթացում ձևավորվող հանրային իրավահարաբերությունները՝ կապված վարչական վեճերի առաջացման, դրանց արտադատական կարգով լուծման և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հետ:

Հետազոտության առարկան են վարչական վեճերի արտադատական կարգով լուծումը կարգավորող սահմանադրական, վարչական և միջազգային իրավական նորմերը, արտասահմանյան երկրների օրենսդրությունը, Հայաստանի

Հանրապետության և այլ պետությունների բարձրագույն դատական ատյանների և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկան և վարչական վեճերի արտադատական լուծման վերաբերյալ գիտական մոտեցումները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է բացահայտել վարչական վեճերի արտադատական կարգով լուծման տեսական և հայեցակարգային հիմքերը, հստակեցնել դրա իրավական բնույթը, ձևերը, սկզբունքները և գործառութային նշանակությունը, ինչպես նաև մշակել Հայաստանի Հանրապետությունում վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկություններ:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1.բացահայտել վարչական վեճի հասկացությունը, իրավական բնույթը և հիմնական հատկանիշները,

2.հստակեցնել վարչական վեճերի արտադատական կարգով լուծման հասկացությունը, իրավական բնույթը և տեղը վարչական արդարադատության համակարգում,

3.ուսումնասիրել վարչական վեճերի արտադատական լուծման սկզբունքները, բացահայտել դրանց բովանդակությունը և գործառութային նշանակությունը, ինչպես նաև հիմնավորել դրանց համակարգային բնույթը,

4.վերլուծել վարչական բողոքարկման ինստիտուտը՝ որպես վարչական վեճերի արտադատական լուծման հիմնական ձև, և բացահայտել դրա տեսական, իրավակարգավորման և կիրառման հիմնախնդիրները,

5.ուսումնասիրել քվազիդատական բողոքարկման իրավական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները և գնահատել դրա զարգացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում,

6.ուսումնասիրել վարչական վեճերի արտադատական լուծման միջազգային իրավական չափորոշիչները և գնահատել դրանց նշանակությունը ներպետական համակարգի զարգացման համար,

7.ուսումնասիրել համաձայնեցման և հաշտարարության ընթացակարգերի տեղն ու նշանակությունը վարչական վեճերի արտադատական լուծման համակարգում և մշակել դրանց կիրառման ու ինստիտուցիոնալ զարգացման հնարավոր ուղղությունները,

8.բացահայտել Հայաստանի Հանրապետությունում վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի հիմնական տեսական, օրենսդրական և գործնական խնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական մեթոդներ՝ անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, պատմական, տրամաբանական և համակարգային վերլուծության մեթոդները, այնպես էլ մասնավոր գիտական մեթոդներ՝ ձևական-իրավաբանական, համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդները, որոնց կիրառումը հնարավորություն է տվել ուսումնասիրել վարչաիրավական վեճերի արտադատական լուծման տեսական և գործնական հիմնահարցերը, վերլուծել ներպետական և արտասահմանյան իրավակարգավորումները, բացահայտել դրանց առանձնահատկություններն ու առկա

խնդիրները և ձևակերպել հետազոտության արդյունքներից բխող եզրահանգումներ ու առաջարկություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել վարչական վեճերի արտադատական կարգով լուծմանն առնչվող Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան պետությունների սահմանադրական, վարչաիրավական և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև տվյալ ոլորտում ձևավորված միջազգային իրավական չափորոշիչները:

Հետազոտության փորձառական հիմքն են կազմել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ հետազոտության թեմային առնչվող որոշումներն ու դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև արտասահմանյան պետությունների համապատասխան իրավակիրառ պրակտիկան:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, ատենախոսության եզրակացության մեջ կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում: Հետազոտության շրջանակներում վարչական վեճերի արտադատական կարգով լուծման ինստիտուտը դիտարկվել է որպես վարչական արդարադատության համակարգի ինքնուրույն և ամբողջական բաղադրիչ, վեր են հանվել դրա տեսական և գործնական հիմնախնդիրները, մշակվել են դրանց լուծմանն ուղղված հայեցակարգային մոտեցումներ և ներկայացվել գործող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

Ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքներով պաշտպանության են ներկայացվում մի շարք եզրահանգումներ, տեսական հիմնադրույթներ և ընդհանրացված առաջարկություններ, որոնք, հանդիսանալով **գիտական նորույթ,** հանգում են հետևյալին.

1.Ատենախոսությունում վարչաիրավական վեճի իրավական բնույթի վերաբերյալ տեսական մոտեցումների համակարգային վերլուծության արդյունքում բացահայտվել և համակարգված տեսքով ներկայացվել են վարչաիրավական վեճի էական հատկանիշները: Հիմնավորվել է այն մոտեցումը, որ վարչաիրավական վեճը հանրային-իրավական հիմք ունեցող բազմակողմ իրավական երևույթ է, որի առաջացումը պարտադիր չէ պայմանավորված լինի կողմերի շահերի անմիջական բախմամբ կամ կոնֆլիկտի առկայությամբ, այլ կարող է հիմնված լինել նաև նրանց իրավական դիրքորոշումների տարբերության, վարչաիրավական հարաբերությունից բխող իրավունքների և պարտականությունների բովանդակության ու ծավալի տարբեր ընկալումների վրա:

Միաժամանակ հիմնավորվել է, որ վարչաիրավական վեճը չի նույնանում դրա լուծման նպատակով ձևավորվող ընթացակարգային իրավահարաբերության հետ և կարող է առաջանալ անկախ համապատասխան վարույթի հարուցումից: Նշված հատկանիշների համադրման հիման վրա հստակեցվել է վարչաիրավական վեճի իրավական բնույթը և առաջարկվել դրա հեղինակային սահմանումը:

2.Ատենախոսությունում վարչաիրավական վեճերի արտադատական լուծման վերաբերյալ տեսական մոտեցումների համակարգային վերլուծության արդյունքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ վարչաիրավական վեճերի արտադատական

լուծումն իր իրավական բնույթով հանդիսանում է վարչաիրավական վեճերի լուծման ընդհանուր համակարգի ինքնուրույն բաղադրիչ, որը չի սահմանափակվում վարչական բողոքարկմամբ կամ որևէ առանձին ընթացակարգով, այլ ընդգրկում է իրավական նորմերով կարգավորվող, ընդհանուր նպատակով և գործառութային նշանակությամբ փոխկապակցված կառուցակարգեր:

Հիմնավորվել է նաև այն գաղափարը, որ արտադատական լուծումը չի կարող դիտարկվել բացառապես որպես դատական պաշտպանության այլընտրանք, քանի որ կարող է հանդես գալ ինչպես դատական պաշտպանությանը նախորդող պարտադիր կամ կամընտիր փուլ, այնպես էլ ինքնուրույն կիրառվող իրավական կառուցակարգ: Նշված մոտեցումների հիման վրա բացահայտվել է վարչաիրավական վեճերի արտադատական լուծման իրավական բնույթը և ձևակերպվել դրա հեղինակային սահմանումը:

3.Վարչաիրավական վեճերի արտադատական լուծման սկզբունքների իրավական բովանդակության և գործառութային նշանակության համակարգային վերլուծության արդյունքում հիմնավորվել է այն դիրքորոշումը, որ վարչաիրավական վեճերի արտադատական լուծման սկզբունքների համակարգն անհրաժեշտ է բնորոշել.

ա) որպես սահմանադրական արժեքային համակարգի և վարչական իրավունքի առանձնահատկություններից բխող հիմնարար իրավական այնպիսի պահանջներ, որոնք որոշում են վեճի քննության և լուծման հիմնական ուղղությունը և կոչված են ապահովելու վարչական մարմնի իրավաչափ գործունեությունն ու անձի իրավունքների արդյունավետ արտադատական պաշտպանությունը,

բ) որպես փոխկապակցված հիմնարար և ընթացակարգային իրավական պահանջների ամբողջություն, որոնք որոշում են արտադատական լուծման իրավական սահմանները, դրա իրականացման կարգը և ուղղված են վարչական մարմնի ու մասնավոր անձի միջև առաջացած վեճի իրավաչափ, արդար և արդյունավետ լուծման ապահովմանը,

գ) որպես միասնական ու փոխկապակցված, սակայն տարբերակված կիրառելիություն ունեցող համակարգ, որի շրջանակում հիմնարար և հատուկ ընթացակարգային սկզբունքների տարանջատումը պայմանավորված է ոչ թե դրանց իրավական ուժի տարբերությամբ, այլ արտադատական լուծման գործընթացում իրականացվող գործառույթով:

Միաժամանակ հիմնավորվել է, որ այդ սկզբունքների կիրառելիության շրջանակը պետք է որոշվի արտադատական լուծման համապատասխան ձևի իրավական բնույթով, նպատակով և ինստիտուցիոնալ առանձնահատկություններով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36–40-րդ հոդվածներով նախատեսված մի շարք պահանջներ, իրենց գործառութային նշանակությամբ պայմանավորված, պետք է դիտարկվեն ոչ միայն որպես ընթացակարգային կանոններ, այլև որպես արտադատական պաշտպանության արդյունավետությունն ապահովող սկզբունքներ:

4.Վարչական բողոքարկման իրավական բնույթի, պատշաճ վարչարարության սահմանադրական երաշխիքների և իրավակիրառ պրակտիկայի համակարգային վերլուծության արդյունքների հիման վրա ատենախոսությունում հիմնավորվել է այն մոտեցումը, ըստ որի՝ վարչական բողոքարկման արդյունավետությունը պետք է

գնահատվի ոչ թե բողոքի բավարարման կամ մերժման վերջնական արդյունքով կամ ընթացակարգային պահանջների ձևական պահպանմամբ, այլ բողոքարկման վարույթի որակը բնութագրող փոխկապակցված չափանիշների համակարգով: Ընդ որում՝

ա) եթե բողոքի իրական և բովանդակային քննությունը, գործի փաստական և իրավական հանգամանքների բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ գնահատումը, ինչպես նաև որոշման պատշաճ պատճառաբանվածությունն ապահովում են վարչական բողոքարկման բովանդակային արդյունավետությունը,

բ) ապա վարչական մարմնի աջակցման պարտականության պատշաճ իրականացումը, բողոք բերող անձի իրական կամքի բացահայտումը և բողոքը քննող մարմնի անաչառությունն ու գործառութային ինքնուրույնությունը հանդես են գալիս որպես այդ արդյունավետության ապահովման անհրաժեշտ երաշխիքներ:

Այս մոտեցման հիման վրա հիմնավորվել է նաև վարչական մարմնի աջակցման պարտականության բովանդակության ընդլայնման, վարչական բողոքի վերաբերյալ որոշման պատճառաբանման պահանջների հստակեցման, ինչպես նաև ընթացակարգային խախտումների իրավական հետևանքների գնահատման չափանիշների վերանայման անհրաժեշտությունը: Մասնավորապես, հիմնավորվել է, որ ընթացակարգային խախտումը վարչական ակտի բեկանման հիմք կարող է հանդիսանալ ոչ միայն այն դեպքում, երբ այն հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել այլ որոշման ընդունման, այլև երբ անձին զրկել է վարչական վարույթին արդյունավետ մասնակցելու և իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրական հնարավորությունից: Նշված մոտեցումների օրենսդրական իրացման նպատակով առաջարկվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածներում (Տե՛ս. Հավելված 1):

5.Քվազիդատական բողոքարկման իրավական բնույթի, կազմակերպման առանձնահատկությունների և միջազգային փորձի համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա ատենախոսությունում հիմնավորվել են քվազիդատական բողոքարկման կազմակերպաիրավական մոդելի ձևավորման վերաբերյալ հետևյալ հեղինակային մոտեցումները, ըստ որոնց՝

ա) քվազիդատական բողոքարկումը վարչաիրավական վեճերի արտադատական լուծման ինքնուրույն ձև է, որի իրավական բնույթը պայմանավորված է վարչական և դատավարական տարրերի համակցությամբ: Ընդ որում՝ դրա առանձնահատկությունը դրսևորվում է ոչ թե դատական վարույթի արտաքին ձևերի վերարտադրմամբ, այլ վարչաիրավական վեճի քննության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ և ընթացակարգային երաշխիքների առկայությամբ,

բ) քվազիդատական մարմնի կազմակերպական առանձնացվածությունը և գործառութային ինքնուրույնությունը փոխկապակցված, սակայն ինքնուրույն նշանակություն ունեցող երաշխիքներ են, որոնցից առաջինը ենթադրում է վեճը քննող մարմնի կազմակերպական տարանջատում վիճարկվող վարչարարությունն իրականացրած մարմնից, իսկ երկրորդը՝ կոնկրետ վեճի քննության և լուծման ընթացքում որոշումների կայացման ինքնուրույնություն՝ բացառելով դրանց բովանդակության նկատմամբ արտաքին միջամտությունը,

գ) քվազիդատական մարմնի կազմակերպական կապը գործադիր իշխանության համակարգի հետ ինքնին չի բացառում դրա քվազիդատական բնույթը, եթե ապահովված են վեճի անաչառ և անկախ քննության բավարար երաշխիքներ, իսկ ընդունված որոշումները ենթակա են արդյունավետ դատական վերահսկողության,

դ) քվազիդատական բողոքարկման արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն համապատասխան մարմնի մասնագիտացմամբ և գործառութային ինքնուրույնությամբ, այլև վեճի բնույթին համապատասխան ընթացակարգային երաշխիքների ապահովմամբ, մասնավորապես՝ անձի լսված լինելու, փաստարկներ և ապացույցներ ներկայացնելու, դրանց գնահատմանը մասնակցելու և պատճառաբանված որոշում ստանալու հնարավորություններով:

6.Վարչաիրավական վեճերի նկատմամբ հաշտարարության կիրառման տեսական մոտեցումների, միջազգային փորձի և ներպետական իրավակարգավորումների համեմատական վերլուծության արդյունքների հիման վրա ատենախոսությունում մշակվել է վարչաիրավական վեճերի մեդիացիոն պիտանիության գնահատման չափանիշների համակարգ և հիմնավորվել են հաշտարարության կիրառելիության սահմանների որոշման ու դրա օրենսդրական ներդրման վերաբերյալ հետևյալ հեղինակային մոտեցումները, ըստ որոնց՝

ա) վարչաիրավական վեճի հանրային-իրավական բնույթը կամ վարչական ակտի իրավաչափության հարցի առկայությունն ինքնին չեն կարող դիտարկվել որպես հաշտարարության կիրառումը բացառող հանգամանքներ, քանի որ նման վեճերը կարող են ներառել փաստական, գնահատողական կամ վարչական մարմնի հայեցողական լիազորությունների շրջանակում լուծման ենթակա հարցեր, որոնց վերաբերյալ հնարավոր է հասնել իրավաչափ փոխհամաձայնեցված լուծման,

բ) վարչաիրավական վեճերի նկատմամբ հաշտարարության կիրառելիության սահմանները պետք է որոշվեն՝ հաշվի առնելով վարչական մարմնի օրենքով սահմանված իրավասությունը, հայեցողական լիազորության կամ համաձայնեցված լուծման հասնելու իրավական հնարավորության առկայությունը, իմպերատիվ իրավական պահանջների պահպանումը, ինչպես նաև հանրային շահի և երրորդ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը,

գ) վարչաիրավական վեճի մեդիացիոն պիտանիությունը պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ պարզելով, թե սահմանված իրավական շրջանակում առկա՞ է արդյոք կողմերի միջև իրավաչափ փոխհամաձայնեցված լուծման հասնելու իրական հնարավորություն, ընդ որում՝ հաշտարարության կիրառումը չի կարող ենթադրել վարչական մարմնի իրավասության սահմանների փոփոխություն, օրենքով սահմանված պարտականությունների կատարումից հրաժարում կամ հանրային շահի տնօրինում՝ օրենքով չնախատեսված կարգով,

դ) վարչաիրավական վեճերի նկատմամբ հաշտարարության կիրառման իրավական հիմքերի հստակեցման նպատակով անհրաժեշտ է լրացում կատարել «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում՝ դրա կարգավորման շրջանակում ուղղակիորեն նախատեսելով նաև օրենքով սահմանված դեպքերում հանրային իրավահարաբերություններից բխող վեճերը, որով կամրագրվի հանրային իրավունքի ոլորտում հաշտարարության սկզբունքային կիրառելիությունը,

ե) վարչական բողոքարկման վարույթում հաշտարարության ինստիտուտի ներդրման նպատակով անհրաժեշտ է համապատասխան կարգավորումներ նախատեսել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում՝ սահմանելով հաշտարարության նախաձեռնման հիմքերը, վարչաիրավական վեճի մեդիացիոն պիտանիության գնահատման չափանիշները, հաշտարարության ընթացքում վարչական բողոքարկման ժամկետների կասեցման կարգը, ձեռք բերված համաձայնության իրավական հետևանքները և կողմերի իրավունքների, հանրային շահի ու երրորդ անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքները: Միաժամանակ վարչական մարմնին պետք է վերապահվի իրավասություն՝ գնահատելու կոնկրետ վեճի հաշտարարության միջոցով կարգավորման հնարավորությունը և օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում կողմերին առաջարկելու դիմել հաշտարարության:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության նշանակությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ ատենախոսությունը վարչական վեճերի արտադատական կարգով լուծման ինստիտուտի տեսական հիմքերի, իրավական կարգավորման, միջազգային փորձի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համակարգային ուսումնասիրությանն ուղղված համալիր գիտական աշխատանք է: Ատենախոսության շրջանակներում փորձ է կատարվել բացահայտելու վարչաիրավական վեճերի արտադատական լուծման հայեցակարգային, իրավակարգավորման և իրավակիրառ պրակտիկայի հիմնախնդիրները, ինչպես նաև մշակելու դրանց հաղթահարմանն ուղղված գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ և օրենսդրական առաջարկություններ:

Դրանով պայմանավորված՝ աշխատությունն ունի գործնական նշանակություն ինչպես վարչական վեճերի արտադատական կարգով լուծման ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման, այնպես էլ համապատասխան իրավական նորմերի կիրառման միասնական պրակտիկայի ձևավորման և վարչական մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Ատենախոսությունում ներկայացված առաջարկությունները կարող են օգտագործվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և վարչական վեճերի արտադատական կարգով լուծմանն առնչվող այլ իրավական ակտերի կատարելագործման գործընթացում:

Բացի այդ, ատենախոսությունն ընդգրկում է տեսական բնույթի եզրահանգումներ, որոնք կարող են կիրառվել վարչական իրավունքի, վարչական արդարադատության և վարչական վեճերի արտադատական կարգով լուծման հիմնահարցերին նվիրված գիտական հետազոտություններում, ինչպես նաև համապատասխան բուհական դասընթացների դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Հայաստանի եվրոպական համալսարանում: Ատենախոսության հիմնական մասերը քննարկվել են գիտական ղեկավարի, ինչպես նաև ամբիոնի ներկայացուցիչների հետ, և տարբեր առանցքային դրույթներ ատենախոսության մեջ ամրագրվել են նախապես համաձայնեցնելուց հետո: Ատենախոսության էությունն արտացոլող գաղափարներն արտահայտվել են մենագրությունում, գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են, իսկ առանձին թեզեր օգտագործվել են նաև

տարբեր գիտաժողովների կամ վերապատրաստումների ընթացքում հեղինակի ներկայացրած զեկույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ընդգրկված 7 պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից, հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

«Վարչական վեճերի արտադատական կարգով լուծման տեսական և հայեցակարգային հիմքերը» վերտառությամբ ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երեք պարագրաֆից:

Առաջին գլխի՝ «Վարչական վեճը պետության իրավական համակարգում. տեսական-իրավական վերլուծություն» վերտառությամբ առաջին պարագրաֆում ուսումնասիրվել են վարչաիրավական վեճի հասկացության և իրավական բնույթի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա տեսական մոտեցումները, բացահայտվել են դրա էական հատկանիշները, առաջացման հիմքերը և առանձնահատկությունները հանրային իրավահարաբերությունների համակարգում: Վերլուծվել են վարչաիրավական վեճի և իրավական կոնֆլիկտի հարաբերակցությունը, վեճի նյութական և ընթացակարգային կողմերը, ինչպես նաև դրա հանրային-իրավական բնույթը որոշելու չափանիշները: Հիմնավորվել է, որ վարչաիրավական վեճի առաջացումը պարտադիր չէ պայմանավորված լինի կողմերի շահերի անմիջական բախմամբ, այլ կարող է առաջանալ նաև նրանց իրավական դիրքորոշումների, իրավունքների և պարտականությունների բովանդակության ու ծավալի տարբեր ընկալումների հետևանքով: Կատարված ուսումնասիրության արդյունքում հստակեցվել է վարչաիրավական վեճի իրավական բնույթը և առաջարկվել դրա հեղինակային սահմանումը:

Առաջին գլխի՝ «Վարչական վեճերի արտադատական լուծման ձևերը և դրանց իրավական բնույթը» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում ուսումնասիրվել են վարչական վեճերի արտադատական լուծման հասկացությունը, իրավական բնույթը և տեղը վարչական արդարադատության համակարգում: Համեմատական վերլուծության են ենթարկվել «արտադատական», «մինչդատական» և «այլընտրանքային» հասկացությունները, ինչպես նաև վեճի լուծման ձևի, կարգի, ընթացակարգի և եղանակի սահմանազատման հիմնահարցերը: Ուսումնասիրվել են արտադատական լուծման ձևերի դասակարգման վերաբերյալ գիտական մոտեցումները, բացահայտվել են վարչական բողոքարկման, համաձայնեցման և հաշտարարության ընթացակարգերի իրավական առանձնահատկություններն ու փոխհարաբերակցությունը: Հիմնավորվել է

վարչական վեճերի արտադատական լուծումը որպես փոխկապակցված իրավական կառուցակարգեր ընդգրկող ինքնուրույն համակարգ դիտարկելու անհրաժեշտությունը և առաջարկվել դրա հեղինակային սահմանումը:

Առաջին գլխի՝ «Վարչական վեճերի արտադատական կարգով լուծման իրավական սկզբունքները և դրանց գործառութային նշանակությունը» վերտառությամբ երրորդ պարագրաֆում ուսումնասիրվել են արտադատական լուծման սկզբունքների հասկացության, իրավական բնույթի և դասակարգման վերաբերյալ տեսական մոտեցումները, բացահայտվել են դրանց բովանդակությունն ու գործառութային նշանակությունը: Վերլուծվել են ՀՀ Սահմանադրությամբ և վարչական օրենսդրությամբ ամրագրված հիմնարար սկզբունքների կիրառման առանձնահատկությունները վարչական վեճերի արտադատական լուծման գործընթացում: Հիմնավորվել է արտադատական լուծման սկզբունքները որպես հիմնարար և հատուկ ընթացակարգային պահանջների միասնական համակարգ դիտարկելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով դրանց տարբերակված կիրառելիությունը արտադատական լուծման առանձին ձևերի նկատմամբ: Միաժամանակ բացահայտվել է վարչական վարույթի որոշ ընթացակարգային պահանջների սկզբունքային նշանակությունը՝ որպես արտադատական պաշտպանության արդյունավետության ապահովման երաշխիքներ:

«Վարչական վեճերի արտադատական լուծման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» վերտառությամբ ատենախոսության երկրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի՝ «Վարչական բողոքարկման ինստիտուտը որպես վարչական վեճի արտադատական լուծման հիմնական ձև. իրավաընկալման բովանդակությունն ու նշանակությունը» վերտառությամբ առաջին պարագրաֆում ուսումնասիրվել են վարչական բողոքարկման իրավական բնույթը, գործառութային նշանակությունը և դրա հարաբերակցությունը դատական պաշտպանության հետ: Համակարգային վերլուծության են ենթարկվել վարչական բողոքարկումը կարգավորող ներպետական օրենսդրությունը, ՀՀ սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում առաջացող հիմնախնդիրները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարչական բողոքի բովանդակային քննությանը, վարչական մարմնի աջակցման պարտականությանը, գործի հանգամանքների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատմանը, որոշումների պատճառաբանվածությանը և ընթացակարգային խախտումների իրավական հետևանքներին: Հիմնավորվել է վարչական բողոքարկման արդյունավետությունը փոխկապակցված բովանդակային և ընթացակարգային չափանիշների հիման վրա գնահատելու անհրաժեշտությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածների կատարելագործմանն ուղղված օրենսդրական առաջարկություններ:

Երկրորդ գլխի՝ «Քվազիդատական բողոքարկման՝ որպես վարչաիրավական վեճի արտադատական լուծման ձևի առանձնահատկությունները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում ուսումնասիրվել են քվազիդատական բողոքարկման հասկացությունը, իրավական բնույթը և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները: Համեմատական

վերլուծության են ենթարկվել արտասահմանյան պետություններում գործող քվազիդատական կառուցակարգերը և դրանց կազմակերպման հիմնական մոդելները՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան ինստիտուտների զարգացման հնարավորությունները գնահատելու նպատակով: Բացահայտվել են քվազիդատական մարմինների կազմակերպական առանձնացվածության, գործառութային ինքնուրույնության, անաչառության և վեճի քննության ընթացակարգային երաշխիքների նշանակությունը: Հիմնավորվել է, որ քվազիդատական բողոքարկման առանձնահատկությունը պայմանավորված է ոչ թե դատական վարույթի արտաքին ձևերի վերարտադրմամբ, այլ վարչահրավական վեճի անկախ, անաչառ և արդյունավետ քննությունն ապահովող կազմակերպահրավական և ընթացակարգային երաշխիքների առկայությամբ: Կատարված վերլուծության արդյունքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում քվազիդատական բողոքարկման կազմակերպահրավական մոդելի ձևավորման և զարգացման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներ:

«Վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի հետագա զարգացման ուղղությունները միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ ատենախոսության երրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆից:

Երրորդ գլխի՝ «Վարչական վեճի արտադատական լուծման հիմնահարցերը միջազգային իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ առաջին պարագրաֆում ուսումնասիրվել են վարչական վեճերի արտադատական լուծմանն առնչվող միջազգային և եվրոպական իրավական չափորոշիչները, դրանց բովանդակությունն ու նշանակությունը ներպետական իրավակարգավորումների զարգացման համար: Վերլուծության են ենթարկվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համապատասխան երաշխիքները, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության շրջանակներում ձևավորված մոտեցումները՝ պատշաճ վարչարարության, արդյունավետ իրավական պաշտպանության և արդար դատաքննության պահանջների համատեքստում: Բացահայտվել են արտադատական պաշտպանության կառուցակարգերի և դատական վերահսկողության փոխհարաբերակցության հիմնական չափանիշները: Հիմնավորվել է, որ վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի զարգացումը պետք է իրականացվի միջազգային իրավական չափորոշիչներին համահունչ՝ միաժամանակ պահպանելով արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի առանձնահատկությունները:

Երրորդ գլխի՝ «Համաձայնեցման և հաշտեցման ընթացակարգերը վարչական վեճերի արտադատական լուծման համակարգում և դրանց ինստիտուցիոնալ զարգացման հեռանկարները» վերտառությամբ երկրորդ պարագրաֆում ուսումնասիրվել են վարչական վեճերի համաձայնեցման և հաշտարարության ընթացակարգերի իրավական բնույթը, դրանց կիրառման հնարավորություններն ու սահմանափակումները հանրային իրավահարաբերություններում: Վերլուծվել են հաշտարարության վերաբերյալ տեսական մոտեցումները, միջազգային փորձը և ներպետական իրավակարգավորումները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով վարչական մարմնի իրավասության սահմաններին, հայեցողական լիազորությունների իրականացմանը, հանրային շահի և երրորդ անձանց իրավունքների պաշտպանության անհրաժեշտությանը: Հիմնավորվել է, որ վարչահրավական վեճի հանրային-իրավական

բնույթը կամ վարչական ակտի իրավաչափության հարցի առկայությունն ինքնին չեն բացառում հաշտարարության կիրառման հնարավորությունը: Մշակվել է վարչաիրավական վեճերի մեդիացիոն պիտանիության գնահատման չափանիշների համակարգ և բացահայտվել են հաշտարարության կիրառելիության իրավական սահմանները: Կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են «Հաշտարարության մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներում համապատասխան կարգավորումներ նախատեսելու առաջարկություններ՝ վարչական բողոքարկման վարույթում հաշտարարության ինստիտուտի ներդրման և դրա արդյունավետ կիրառման նպատակով:

Եզրակացությունում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ներկայացվել են վարչական վեճերի արտադատական լուծման տեսական և գործնական հիմնախնդիրների վերաբերյալ հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադատական պաշտպանության համակարգի կատարելագործմանն ուղղված օրենսդրական առաջարկությունները:

Ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների՝ այդ եզրահանգումներն ու առաջարկություններն ամփոփ հանգում են հետևյալին.

Վարչական վեճերի արտադատական կարգով լուծման տեսական և հայեցակարգային հիմքերի, ներպետական ու միջազգային իրավակարգավորումների, իրավակիրառ պրակտիկայի և արտասահմանյան փորձի համալիր ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են վարչաիրավական վեճերի արտադատական լուծման համակարգի իրավական կարգավորման և գործնական կիրառման մի շարք հիմնախնդիրներ, ինչպես նաև մշակվել են դրանց հաղթահարմանն ու Հայաստանի Հանրապետությունում արտադատական պաշտպանության կառուցակարգերի հետագա զարգացմանն ուղղված առաջարկություններ:

Կատարված հետազոտության արդյունքների ընդհանրացումը հնարավորություն է տալիս ձևակերպելու հետևյալ հիմնական եզրահանգումները.

1.Վարչաիրավական վեճի հանրային-իրավական բնույթը պայմանավորված է ոչ միայն դրա մասնակիցների սուբյեկտային կազմով, այլև այն իրավահարաբերության բովանդակությամբ, որից ծագել է վեճը, հանրային իշխանական լիազորությունների իրականացման հետ դրա կապով և վիճելի իրավական հարցի բնույթով: Այս տեսանկյունից վարչաիրավական վեճի առարկան չի սահմանափակվում վարչական ակտի իրավաչափության վիճարկմամբ, այլ կարող է ընդգրկել նաև վարչական մարմնի գործողությունների կամ անգործության, ինչպես նաև հանրային իրավահարաբերությունից բխող իրավունքների և պարտականությունների գոյության, բովանդակության ու ծավալի վերաբերյալ տարաձայնությունները:

Միաժամանակ հանրային իրավահարաբերության մասնակիցների սկզբնական իրավական անհավասարությունը չի կարող հիմք հանդիսանալ վեճի լուծման ընթացքում նրանց ընթացակարգային հնարավորությունների անհավասարության պահպանման համար: Արտադատական պաշտպանության իրավական կառուցակարգերը պետք է ուղղված լինեն վարչական մարմնի և անձի միջև առկա իրավական անհավասարության պայմաններում ընթացակարգային հավասարակշռության ապահովմանը՝ անձի համար երաշխավորելով իր

դիրքորոշումը ներկայացնելու, վարչական մարմնի փաստարկներին ծանոթանալու և իր իրավունքներն արդյունավետ պաշտպանելու իրական հնարավորություն:

2.Վարչաիրավական վեճերի արտադատական լուծման ձևերի իրավական բնույթի բացահայտման համար անհրաժեշտ է հստակ սահմանազատել «արտադատական», «մինչդատական» և «այլընտրանքային» հասկացությունները: Մասնավորապես, «արտադատական» բնորոշումը ցույց է տալիս վեճի լուծումը դատական վարույթից դուրս իրականացնելու հանգամանքը, «մինչդատականը»՝ համապատասխան ընթացակարգի հարաբերակցությունը հետագա դատական պաշտպանության հետ, իսկ «այլընտրանքայինը»՝ վեճի լուծման տարբեր իրավական կառուցակարգերի միջև ընտրության հնարավորությունը: Նշված հասկացությունների նույնացումը կարող է հանգեցնել ինչպես արտադատական պաշտպանության առանձին ձևերի իրավական բնույթի սխալ ընկալման, այնպես էլ դրանց կիրառման պայմանների ոչ հստակ սահմանման:

Նույն համատեքստում անհրաժեշտ է տարբերակել նաև արտադատական լուծման ձևը, կարգը, ընթացակարգը և եղանակը: Դրանցից յուրաքանչյուրն արտահայտում է վեճի լուծման իրավական կազմակերպման տարբեր կողմ, ուստի այդ հասկացությունների հետևողական կիրառումն ունի ոչ միայն տեսական, այլև իրավակարգավորման գործնական նշանակություն:

3.Վարչաիրավական վեճերի արտադատական լուծման կառուցակարգերը նպատակահարմար է տարբերակել՝ հաշվի առնելով վեճը քննող սուբյեկտի իրավական կարգավիճակը, կողմերի կամարտահայտության նշանակությունը, կիրառվող ընթացակարգի առանձնահատկությունները, որոշում կայացնելու իրավասության բնույթը և ձեռք բերվող արդյունքի իրավական հետևանքները: Այս չափանիշների համադրումը հնարավորություն է տալիս սահմանազատելու այն կառուցակարգերը, որոնց շրջանակում վեճը լուծվում է իրավասու մարմնի պարտադիր որոշմամբ, և այն ընթացակարգերը, որոնց արդյունքը պայմանավորված է կողմերի համաձայնությամբ:

Միաժամանակ արտադատական պաշտպանության բոլոր միջոցները չեն կարող նույնացվել վարչաիրավական վեճի լուծման ինքնուրույն ձևերի հետ: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, հաշվի առնելով դրա իրավական կարգավիճակը և լիազորությունների բնույթը, առավել հիմնավորված է դիտարկել որպես անձի իրավունքների արտադատական պաշտպանության լրացուցիչ իրավապաշտպան կառուցակարգ, այլ ոչ վարչաիրավական վեճերի պարտադիր իրավական լուծում ապահովող ինքնուրույն ձև:

4.Վարչաիրավական վեճերի լուծման դատական և արտադատական կառուցակարգերի հարաբերակցությունը պետք է գնահատել դրանց գործառութային առանձնահատկությունների հաշվառմամբ: Դատական պաշտպանությունն ապահովում է վեճի անկախ դատական քննություն և պարտադիր իրավական լուծում, մինչդեռ վարչական բողոքարկումը հնարավորություն է տալիս վիճարկվող վարչարարությունը վերանայել վարչական համակարգի ներսում՝ ապահովելով խախտումների հնարավորինս արագ վերացումը և վարչական մարմնի կողմից սեփական սխալների ուղղումը:

Այս համատեքստում վարչական բողոքարկման ինքնուրույն նշանակությունը դրսևորվում է նաև դրա քննության շրջանակով: Եթե դատական վերահսկողության

հիմնական առարկան վարչարարության իրավաչափությունն է, ապա վարչական բողոքարկման շրջանակում, համապատասխան իրավասության առկայության դեպքում, հնարավոր է գնահատել ոչ միայն վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը, այլև վարչական մարմնի հայեցողական լիազորության իրականացման նպատակահարմարությունը: Այս առանձնահատկությունը վարչական բողոքարկմանը հաղորդում է այնպիսի գործառութային նշանակություն, որը չի կարող ամբողջությամբ փոխարինվել դատական վերահսկողությամբ:

5.Օրենքով նախատեսված պարտադիր մինչդատական բողոքարկումը կարող է հանդիսանալ վարչաիրավական վեճերի արդյունավետ լուծման միջոց, եթե այն ծառայում է իրավաչափ նպատակների և չի վերածվում դատարանի մատչելիության անհամաչափ սահմանափակման: Նման ընթացակարգի սահմանումը պետք է ուղեկցվի բողոքարկման հստակ պայմանների, ողջամիտ ժամկետների, անձի ընթացակարգային իրավունքների և հետագա դատական պաշտպանության իրական հնարավորության ապահովմամբ:

Հետևաբար, պարտադիր վարչական բողոքարկման իրավաչափությունը չի կարող գնահատվել միայն դրա օրենսդրական նախատեսված լինելու հանգամանքով: Անհրաժեշտ է նաև պարզել, թե արդյոք համապատասխան կառուցակարգը գործնականում հնարավորություն է տալիս անձին ստանալու իր պահանջի արդյունավետ քննություն՝ առանց անհարկի ձգձգելու կամ դժվարացնելու դատական պաշտպանության իրավունքի իրականացումը:

6.Վարչաիրավական վեճերի արտադատական լուծման սկզբունքների գործնական իրացումը պահանջում է դրանց բովանդակության համապատասխանեցում կոնկրետ ընթացակարգի առանձնահատկություններին: Մասնավորապես, վարչարարության օրինականության, համաչափության, կամայականության արգելքի և հայեցողական լիազորությունների սահմանափակման պահանջները վարչական բողոքարկման ընթացքում ունեն երկակի նշանակություն. դրանք միաժամանակ հանդիսանում են ինչպես վիճարկվող վարչարարության իրավաչափության գնահատման չափանիշներ, այնպես էլ բողոքը քննող մարմնի սեփական գործունեության իրավական սահմաններ:

Այս հանգամանքը ենթադրում է, որ վարչական մարմինը բողոքի քննության ընթացքում պարտավոր է ոչ միայն ստուգել նախկինում իրականացված վարչարարության համապատասխանությունն իրավական պահանջներին, այլև իր վերանայման լիազորություններն իրականացնել նույն սկզբունքների պահպանմամբ:

7.Վարչական բողոքարկման ընթացքում ընթացակարգային երաշխիքների արդյունավետ իրականացումը նպատակահարմար է ապահովել դրանց առավել հստակ օրենսդրական ամրագրմամբ: Այս նպատակով առաջարկվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝ նախատեսելով, որ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանմամբ և ապահովում է բողոքի անաչառ, բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննությունը, անձի լսված լինելու իրավունքը, վարույթի նյութերի մատչելիությունը, ողջամիտ ժամկետում բողոքի քննությունը և վարույթի մասնակցին անհրաժեշտ օգնության ցուցաբերումը:

Նման կարգավորումը հնարավորություն կտա վարչական բողոքարկման վարույթին բնորոշ ընթացակարգային երաշխիքները ներկայացնել փոխկապակցված ձևով՝ նվազեցնելով դրանց հատվածական կամ զուտ ձևական կիրառման հնարավորությունը:

8.Վարչական բողոքարկման ընթացքում ընթացակարգային խախտումների իրավական հետևանքները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն դրանց ազդեցությունը վարչական որոշման բովանդակության, այլև անձի ընթացակարգային իրավունքների իրականացման վրա: Այս համատեքստում անհրաժեշտ է տարբերակել այն խախտումները, որոնք կրում են ձևական բնույթ և չեն ազդում անձի իրավական պաշտպանության հնարավորությունների վրա, և այն խախտումները, որոնք էականորեն սահմանափակում են վարչական վարույթում անձի իրավունքների իրականացումը:

Նման տարբերակված մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու ընթացակարգային պահանջների պահպանման և վարչական ակտերի իրավական կայունության միջև անհրաժեշտ հավասարակշռությունը՝ միաժամանակ բացառելով անձի իրավունքների էական խախտումների արդարացումը միայն այն պատճառաբանությամբ, որ վարչական ակտի վերջնական բովանդակությունը կարող էր մնալ անփոփոխ:

9.Վարչական բողոքարկման գործնական նշանակությունը չի սահմանափակվում առանձին վարչաիրավական վեճի լուծմամբ: Բողոքների քննության ընթացքում բացահայտվող կրկնվող խախտումները, վարչական ակտերի պատճառաբանման թերությունները և վարչական պրակտիկայի անհամապատասխանությունները կարող են ծառայել որպես համապատասխան մարմնի գործունեության կատարելագործման տեղեկատվական հիմք:

Այս առումով նպատակահարմար է զարգացնել վարչական բողոքարկման արդյունքների համակարգային վերլուծության և դրանց հիման վրա վարչարարության պրակտիկայի վերանայման կառուցակարգեր: Դրանց կիրառումը կարող է նպաստել ոչ միայն արդեն թույլ տրված խախտումների վերացմանը, այլև նույնաբնույթ խախտումների կրկնության կանխարգելմանը՝ վարչական բողոքարկումը դարձնելով հանրային կառավարման որակի բարելավման գործնական միջոց:

10.Քվազիդատական բողոքարկման ընթացակարգային երաշխիքների բովանդակությունը պետք է որոշվի վեճի բնույթով և քննության առանձնահատկություններով՝ առանց դատական վարույթի բոլոր կանոնները մեխանիկորեն վերարտադրելու:

Վիճելի փաստական հանգամանքների կամ հակասական ապացույցների առկայության դեպքում առանձնահատուկ նշանակություն կարող են ունենալ բանավոր լսումները և ապացույցների անմիջական հետազոտությունը: Միաժամանակ վարույթի հրապարակայնությունն ու թափանցիկությունը պետք է համադրվեն անձնական տվյալների, օրենքով պահպանվող գաղտնիքի և այլ իրավաչափ շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ:

Քվազիդատական քննության արդյունավետության ապահովման համար կարևոր է նաև բացառել վիճարկվող վարչական ակտի ընդունմանը մասնակցած անձանց ներգրավումը նույն վեճի քննությանը, եթե դա կարող է կասկածի տակ դնել քննության անաչառությունը:

11. Միջազգային իրավական չափորոշիչների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարչաիրավական վեճի նախնական քննությունը ոչ դատական մարմնին վերապահելն ինքնին անհամատեղելի չէ արդար դատաքննության պահանջների հետ: Սակայն այն դեպքերում, երբ վեճը վերաբերում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառման շրջանակում գտնվող իրավունքներին և պարտականություններին, անհրաժեշտ է ապահովել, որ արտադատական մարմնի որոշման նկատմամբ հասանելի լինի համապատասխան ծավալի դատական վերահսկողություն՝ հաշվի առնելով վեճի բնույթը և դատարանի իրավազորության պահանջները:

Այս համատեքստում արտադատական վարույթի ընթացակարգային երաշխիքները և հետագա դատական վերահսկողությունը պետք է դիտարկել փոխկապակցվածության մեջ: Արտադատական մարմնի մասնագիտացումը կամ վեճի քննության օպերատիվությունը չեն կարող ինքնին փոխարինել անկախ դատարանի կողմից արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորությանը:

12.Եվրոպայի խորհրդի և եվրոպական համապատասխան մարմինների փաստաթղթերի համադրական ուսումնասիրությունը վկայում է վարչական վեճերի արտադատական լուծման նկատմամբ առավել բազմակողմ մոտեցման ձևավորման մասին: Մասնավորապես, պատշաճ վարչարարության անհատական ընթացակարգային երաշխիքների ամրագրմանը զուգահեռ կարևորվում են վարչական մարմինների ներսում վերանայման, հաշտեցման, հաշտարարության և այլ արտադատական միջոցների գործնական կիրառման հնարավորությունները:

Այս մոտեցումների ներպետական իրացումը պահանջում է ոչ միայն համապատասխան կառուցակարգերի իրավական ճանաչում, այլև դրանց կիրառման հստակ պայմանների, անձանց տեղեկացման, ընթացակարգային երաշխիքների և դատական պաշտպանության հետ հարաբերակցության կարգավորում:

Հայաստանի Հանրապետությունում նման կառուցակարգերի զարգացումը նպատակահարմար է իրականացնել աստիճանաբար՝ հաշվի առնելով վարչական մարմինների իրավասությունների առանձնահատկությունները, առանձին ոլորտներում առաջացող վեճերի բնույթը և համապատասխան ընթացակարգերի կիրառման գործնական հնարավորությունները:

13.Վարչաիրավական վեճերի համաձայնեցված կարգավորման իրավական բնույթի բացահայտման համար անհրաժեշտ է տարբերակել հաշտությունը և հաշտարարությունը: Հաշտությունը վեճի փոխհամաձայնեցված կարգավորման արդյունքն է, մինչդեռ հաշտարարությունը չեզոք երրորդ անձի մասնակցությամբ այդ արդյունքին հասնելուն ուղղված ընթացակարգ է: Հաշտարարը չի իրականացնում արդարադատություն, չի ընդունում կողմերի համար պարտադիր որոշում և չի կարող վարչական մարմնի փոխարեն իրականացնել վերջինիս վերապահված հայեցողական լիազորությունները:

Միաժամանակ անհրաժեշտ է սահմանազատել հաշտարարության ընթացակարգին դիմելու կամ նախնական հանդիպմանը մասնակցելու պարտադիրությունը և հաշտության համաձայնություն կնքելու կամավորությունը: Օրենսդիրը կարող է նախատեսել հաշտարարությանը դիմելու որոշակի ընթացակարգային պահանջներ, սակայն վերջնական համաձայնության ձեռքբերումը

պետք է հիմնվի կողմերի ազատ և գիտակցված կամարտահայտության վրա՝ պահպանելով հանրային իրավունքի պարտադիր պահանջները:

14.Վարչաիրավական վեճերում համաձայնեցված լուծման հնարավորության գնահատման ընթացքում անհրաժեշտ է տարբերակել օրենքով ամբողջությամբ կանխորոշված իրավական հետևանքները և այն իրավիճակները, որոնցում վարչական մարմինն ունի իրավաչափ լուծումների միջև ընտրություն կատարելու հնարավորություն:

Մասնավորապես, եթե իրավական հետևանքը միանշանակ սահմանված է իմպերատիվ նորմով, կողմերի համաձայնությունը չի կարող հիմք հանդիսանալ այդ հետևանքից շեղվելու համար: Միաժամանակ փաստական, տեխնիկական կամ հաշվարկային տարաձայնությունների առկայությունը կարող է հնարավորություն ընձեռել կողմերին պարզաբանելու վիճելի հանգամանքները և գտնելու իրավաչափ լուծում՝ պայմանով, որ դրա արդյունքում չեն փոփոխվում օրենքով պարտադիր սահմանված իրավական հետևանքները:

15.Վարչաիրավական վեճում հաշտարարության արդյունքում ձեռք բերված համաձայնությունը չի կարող ինքնին փոխարինել վարչական մարմնի այն որոշմանը կամ գործողությանը, որի իրականացումն օրենքով անհրաժեշտ է համապատասխան իրավական հետևանքն առաջացնելու համար: Եթե համաձայնության կատարումը պահանջում է վարչական ակտի ընդունում, փոփոխում կամ վերացում, վարչական մարմինը պարտավոր է համապատասխան լիազորությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Այս առանձնահատկությունը պայմանավորում է հաշտարարության արդյունքում ձեռք բերված համաձայնության և վարչական ակտի հարաբերակցության հստակ իրավական կարգավորման անհրաժեշտությունը՝ ապահովելու համաձայնեցված լուծման իրավաչափ իրականացումը և դրա արդյունքում առաջացող իրավական հետևանքների որոշակիությունը:

16.Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության իրավական կարգավորման զարգացումը պետք է հիմնվի ընդհանուր և ոլորտային օրենսդրության փոխկապակցվածության վրա՝ ապահովելով համապատասխան կառուցակարգերի համահունչ և հետևողական ներդրումը վարչական վեճերի արտադատական լուծման համակարգում:

Միաժամանակ հաշտարարության ինստիտուտի արդյունավետ կիրառումը չի կարող ապահովվել բացառապես դրա օրենսդրական ամրագրմամբ: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև վարչական մարմինների գործունեության կազմակերպական առանձնահատկությունները, համապատասխան ընթացակարգերի գործնական կիրառելիությունը և դրանց ներդրման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ նախադրյալները: Այս առումով հաշտարարության զարգացման ուղղությունները նպատակահարմար է որոշել՝ ելնելով առանձին ոլորտներում առաջացող վեճերի բնույթից և դրանց համաձայնեցված կարգավորման իրական հնարավորություններից՝ պահպանելով վարչարարության օրինականության, հանրային շահի պաշտպանության և դատական պաշտպանության մատչելիության պահանջները:

17.Վարչաիրավական վեճերի արտադատական լուծման համակարգի զարգացման արդյունավետությունը նպատակահարմար չէ գնահատել բացառապես դատարան ներկայացվող գործերի թվի հնարավոր կրճատմամբ: Դատական

ծանրաբեռնվածության նվազեցումը կարող է հանդիսանալ նման կառուցակարգերի զարգացման դրական հետևանք, սակայն չի կարող դիտարկվել որպես դրանց հիմնական իրավապաշտպան նշանակությունը բնութագրող ինքնուրույն և բավարար չափանիշ:

Առավել կարևոր է գնահատել, թե որքանով են արտադատական ընթացակարգերը նպաստում անձի իրավունքների ժամանակին վերականգնմանը, վարչական մարմինների կողմից թույլ տրված սխալների ուղղմանը, կրկնվող իրավախախտումների կանխարգելմանը և վարչարարության որակի բարելավմանը:

Այս առումով արտադատական պաշտպանության համակարգի հետագա կատարելագործումը պետք է ուղեկցվի դրա գործնական արդյունավետության գնահատման այնպիսի մոտեցումների զարգացմամբ, որոնք հաշվի կառնեն ոչ միայն ընթացակարգերի կիրառման քանակական ցուցանիշները, այլև դրանց արդյունքում ապահովված իրավական պաշտպանության որակը:

18. Հայաստանի Հանրապետությունում վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ է ապահովել տարբեր կառուցակարգերի իրավական և գործառութային փոխկապակցվածությունը՝ միաժամանակ պահպանելով դրանց առանձնահատկությունները: Վարչական բողոքարկման կատարելագործումը, ոլորտային քվազիդատական մարմինների զարգացման հնարավորությունների գնահատումը և համաձայնեցման ու հաշտարարության ընթացակարգերի աստիճանական ներդրումը պետք է իրականացվեն համակարգված իրավական քաղաքականության շրջանակում:

Նման զարգացման հիմնական ուղղությունը պետք է լինի վարչահրավական վեճերի առավել վաղ փուլում իրավաչափ և արդյունավետ կարգավորման հնարավորությունների ընդլայնումը՝ առանց վարչական մարմինների իրավասությունների սահմանների փոփոխության կամ դատական պաշտպանության սահմանադրական երաշխիքների թուլացման:

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքները վկայում են, որ վարչական վեճերի արտադատական լուծման համակարգի կատարելագործումը պետք է ուղղված լինի ոչ միայն առանձին ընթացակարգերի իրավական կարգավորման հստակեցմանը, այլև դրանց գործնական արդյունավետության, փոխկապակցվածության և անձի իրավունքների պաշտպանության իրական հնարավորությունների ամրապնդմանը: Այդ նպատակով անհրաժեշտ է համադրել վարչարարության օրինականության ապահովումը, վարչական մարմինների կողմից սեփական սխալների ուղղումը, վեճերի մասնագիտական և անաչառ քննությունը, ինչպես նաև իրավաչափ համաձայնեցված լուծումների կիրառման հնարավորությունները՝ պահպանելով հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը և անկախ դատարան դիմելու իրավունքը:

Ատենախոսության հավելվածում ներկայացված են օրենսդրական այն փոփոխությունները, որոնք բխեցվել են աշխատությունում կատարված վերլուծություններից:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.Համբարձումյան Մ., Վարչական վեճերի արտադատական կարգով լուծման հիմնախնդիրները (Մենագրություն), | ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2026, 288 էջ:

2.Խաչատրյան Ա., Համբարձումյան Մ., Վարչաիրավական վեճերի հիմնահարցերը իրավական պետության համատեքստում. սահմանադրաիրավական մոտեցումներ | «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու 17(01) 2026, Երևան, էջեր 129-137:

3.Համբարձումյան Մ., Վարչաիրավական վեճի իրավական բնույթը և սահմանազատման չափանիշները հանրային իրավահարաբերությունների շրջանակում| «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու 17(01) 2026, Երևան, էջեր 185-191:

4.Համբարձումյան Մ., Վարչական բողոքարկումը որպես վարչաիրավական վեճերի արտադատական լուծման հայեցակարգային և ինստիտուցիոնալ հիմք | «Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերական, № 1 (2026), Երևան, էջեր 20-31:

5.Համբարձումյան Մ., Վարչական բողոքի իրավական բնույթը և կառուցվածքային տարրերը | «Արդարադատություն» պարբերական, 2026 N 4 (65), Երևան, էջեր 74-80:

6.Համբարձումյան Մ., Պատշաճ վարչարարության իրավունքը վարչական բողոքարկման վարույթում| «Արդարադատություն» պարբերական, 2026 N 4 (65), Երևան, էջեր 81-88:

АМБАРЦУМЯН МЕРИ ГЕВОРГОВНА

ПРОБЛЕМЫ ВНЕСУДЕБНОГО РАЗРЕШЕНИЯ АДМИНИСТРАТИВНЫХ СПОРОВ: КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 — Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление).

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования обусловлена необходимостью обеспечения эффективной защиты прав и законных интересов частных лиц в сфере публичного управления, совершенствования механизмов надлежащего администрирования и повышения эффективности административной юстиции. Несмотря на то что отдельные вопросы разрешения административных споров, административного обжалования и внесудебной защиты прав рассматривались в отечественной и зарубежной юридической литературе, внесудебное разрешение административных споров как единая система взаимосвязанных правовых механизмов не получило достаточного комплексного научного исследования. Это обусловливает необходимость уточнения теоретических основ данного института, выявления проблем его правового регулирования и определения перспектив дальнейшего развития в Республике Армения.

Основной целью диссертационного исследования является всестороннее изучение теоретических и концептуальных основ внесудебного разрешения административных споров, выявление особенностей его правового регулирования и практического применения, а также разработка научно обоснованных предложений по совершенствованию системы внесудебного разрешения административных споров в Республике Армения с учётом международных и европейских правовых стандартов.

В рамках исследования проанализированы существующие в юридической науке подходы к определению понятия и правовой природы административного спора, выявлены его существенные признаки и предложено авторское определение. Исследованы правовая природа и основные формы внесудебного разрешения административных споров, их соотношение с судебной защитой, а также система правовых принципов, определяющих порядок и пределы применения внесудебных механизмов. Обоснована необходимость рассмотрения внесудебного разрешения административных споров в качестве самостоятельного компонента общей системы разрешения административно-правовых споров.

Особое внимание уделено административному обжалованию как основной форме внесудебного разрешения административных споров. На основе анализа законодательства Республики Армения, правовых позиций Конституционного и Кассационного судов, а также правоприменительной практики выявлены проблемы, связанные с обеспечением всестороннего и объективного рассмотрения административных жалоб, выполнением административными органами обязанности по оказанию содействия участникам административного производства, надлежащим

обоснованием принимаемых решений и оценкой правовых последствий процедурных нарушений. По результатам исследования разработаны предложения по совершенствованию соответствующих положений Закона Республики Армения «Об основах администрирования и административном производстве».

В диссертации также исследованы правовая природа и организационно-правовые особенности квазисудебного обжалования. На основе сравнительно-правового анализа зарубежного опыта определены основные гарантии организационной обособленности, функциональной самостоятельности и беспристрастности квазисудебных органов, а также обоснована необходимость обеспечения соответствующих процедурных гарантий и эффективного судебного контроля за принимаемыми ими решениями. Разработаны концептуальные подходы к развитию квазисудебных механизмов в правовой системе Республики Армения.

Отдельное место в работе занимает исследование международных и европейских правовых стандартов внесудебного разрешения административных споров, а также согласительных процедур и медиации в сфере публично-правовых отношений. Выявлены правовые пределы применения медиации при разрешении административных споров и разработана система критериев определения возможности урегулирования таких споров посредством медиации. Обоснована возможность применения медиации в пределах установленных законом полномочий административных органов при условии соблюдения принципа законности, обеспечения защиты публичных интересов и прав третьих лиц. На этой основе сформулированы предложения по совершенствованию законодательства Республики Армения, направленные на создание правовых основ применения медиации в производстве по административным жалобам.

По результатам проведённого исследования сформулированы теоретические выводы и практические рекомендации, направленные на совершенствование административного обжалования, развитие квазисудебных механизмов и внедрение согласительных процедур в систему внесудебного разрешения административных споров. Предложенные подходы призваны способствовать повышению эффективности защиты прав и законных интересов частных лиц, улучшению качества администрирования, предупреждению и разрешению административно-правовых споров, а также дальнейшему совершенствованию системы административной юстиции Республики Армения.

HAMBARDZUMYAN MERI

PROBLEMS OF THE EXTRAJUDICIAL RESOLUTION OF ADMINISTRATIVE DISPUTES: CONCEPTUAL APPROACHES

Dissertation Abstract for the Degree of Candidate of Legal Sciences in the Field of 12.00.02 – Public Law (constitutional, administrative, financial, municipal, environmental, european law, public administration).

ABSTRACT

The relevance of the research topic is determined by the need to ensure effective protection of the rights and legitimate interests of private persons in the sphere of public administration, to improve the mechanisms of good administration, and to enhance the effectiveness of administrative justice. Although certain issues relating to the resolution of administrative disputes, administrative appeals, and the extrajudicial protection of rights have been examined in Armenian and foreign legal scholarship, the extrajudicial resolution of administrative disputes as a unified system of interrelated legal mechanisms has not been sufficiently examined through comprehensive academic research. This necessitates clarification of the theoretical foundations of this legal institution, identification of problems in its legal regulation, and determination of prospects for its further development in the Republic of Armenia.

The main objective of the dissertation research is to conduct a comprehensive study of the theoretical and conceptual foundations of the extrajudicial resolution of administrative disputes, to identify the specific features of its legal regulation and practical application, and to develop scientifically substantiated proposals for improving the system of extrajudicial resolution of administrative disputes in the Republic of Armenia, taking into account international and European legal standards.

The research analyses existing approaches in legal scholarship to defining the concept and legal nature of an administrative dispute, identifies its essential characteristics, and proposes the author's own definition. It examines the legal nature and principal forms of extrajudicial resolution of administrative disputes, their relationship with judicial protection, and the system of legal principles governing the procedures and limits of the application of extrajudicial mechanisms. The necessity of considering the extrajudicial resolution of administrative disputes as an independent component of the overall system for resolving administrative-law disputes is substantiated.

Particular attention is devoted to administrative appeals as the principal form of extrajudicial resolution of administrative disputes. Based on an analysis of the legislation of the Republic of Armenia, the legal positions of the Constitutional Court and the Court of Cassation, as well as the practice of applying the law, the research identifies problems related to ensuring the comprehensive and objective examination of administrative appeals, the fulfilment by administrative authorities of their duty to provide assistance to participants in administrative proceedings, the provision of adequate reasons for the decisions adopted, and the assessment of the legal consequences of procedural violations. Based on the findings of

the research, proposals have been developed to improve the relevant provisions of the Law of the Republic of Armenia "On Fundamentals of Administrative Action and Administrative Proceedings".

The dissertation also examines the legal nature and organisational and legal characteristics of quasi-judicial appeals. On the basis of a comparative legal analysis of foreign legal systems, the principal guarantees of organisational separation, functional autonomy, and impartiality of quasi-judicial bodies are identified. The necessity of ensuring appropriate procedural safeguards and effective judicial review of decisions adopted by such bodies is also substantiated. Conceptual approaches to the development of quasi-judicial mechanisms within the legal system of the Republic of Armenia have been formulated.

A separate part of the research is devoted to examining international and European legal standards governing the extrajudicial resolution of administrative disputes, as well as conciliation procedures and mediation in the sphere of public-law relations. The legal limits of applying mediation to the resolution of administrative disputes are identified, and a system of criteria for determining the suitability of such disputes for settlement through mediation is developed. The possibility of applying mediation within the limits of the powers conferred by law upon administrative authorities is substantiated, provided that the principle of legality is observed and the protection of public interests and the rights of third parties is ensured. On this basis, proposals are formulated for improving the legislation of the Republic of Armenia, aimed at establishing a legal framework for the application of mediation in administrative appeal proceedings.

As a result of the research conducted, theoretical conclusions and practical recommendations have been formulated, aimed at improving administrative appeals, developing quasi-judicial mechanisms, and introducing conciliation procedures into the system of extrajudicial resolution of administrative disputes. The proposed approaches are intended to contribute to enhancing the effectiveness of the protection of the rights and legitimate interests of private persons, improving the quality of public administration, preventing and resolving administrative-law disputes, and further developing the system of administrative justice in the Republic of Armenia.

